

Չեռագոտական աշխատանք

<p>Կազմակերպության տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Չեռախոս 	<p>«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908</p>
<p>Չեռագոտության թեմա/վերնագիր</p> <ul style="list-style-type: none"> • Չեռագոտության թեմա 	<p>«Չամագործակցային հմտությունների ձևավորումը աշակերտների մոտ»</p>
<p>Ուսուցչի տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Չեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ 	<p>Չասմիկ Սերոբի Սերոբյան Մանկավարժ 098830727 serobyan.hasmik.70@gmail.com Կենտրոնություն 7-12-րդ դասարան</p>
<p>Ուսումնական հաստատության տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Անվանումը, հասցե • Չեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե 	<p><< Արամուսի Վ.Առաքելյանի անվան միջն.դպրոց >> 093207237 aramus@schools.am aramus@schoolsite.am</p>



Բովանդակություն

Բովանդակություն.....

.....2

Ներածություն.....

...3

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԱԿՆԱՐԿ.....5

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ

1. Ուսուցման գործընթացում համագործակցության անհրաժեշտությունը և համագործակցային ուսուցման մեթոդներ.....7
2. Ուսուցման գործընթացում համագործակցային մեթոդների կիրառությունը և ազդեցությունը սոցիալական հմտությունների ձևավորման գործընթացում.....
...12

Եզրակացություններ.....

....17

Օգտագործված գրականության

ցանկ.....20

Ներածություն

Կրթության գործընթացում դասավանդման և ուսուցման հնացված ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, ուստի դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումներ:

Այսօր պետությունների համագործակցության արդիական հիմնահարցերից մեկը կրթական համակարգի վերակառուցումն է՝ հասարակության զարգացման ժամանակակից պահանջներին համապատասխան: Ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման տեմպը, ուսուցման ժամանակակից մեթոդները, սովորողների անընդհատ ինքնակրթության և զարգացման անհրաժեշտությունը պարտադրում են ուսուցման գործընթացում կիրառել այնպիսի մեթոդներ, որոնք բարձրացնում են կրթության արդյունավետությունը և որակը, ապահովում են ինքնուրույն ճանաչողական գործունեության շարժառիթներ, նպաստում են միջառարկայական կապերի ամրապնդմանը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և առարկայական ծրագրերի ինտեգրման եղանակով: Մեթոդների ընտրությունը և կիրառությունը ինքնանպատակ լինել չի կարող:

Ուսուցման գործընթացի կազմակերպումը պետք է իր մեջ ներառի ուսուցման բազմազան մեթոդներ: Մենք եկել ենք այն համոզման, որ համագործակցության ճանապարհով ձեռք բերված գիտելիքները ավելի կայուն են ավելի կիրառելի:

Ակտիվ ուսուցման մեթոդները նպաստում են երեխաների ազատ և ինքնուրույն մտածելու, սեփական կարծիք հայտնելու, պատասխանատու որոշումներ կայացնելու, ընտրություն կատարելու հմտությունների զարգացմանը, ճանաչողական գործընթացում ինքնուրույն

կողմնորոշմանը: Այդ մեթոդները զույգերով , խմբով մտավոր աշխատանքի եղանակներն են՝ ուղղված համատեղ որոնումների և մտորումների քննարկմանը, ընդհանուր որոշումների կայացմանն ու իրագործմանը:

Համագործակցային մեթոդների միջոցով ապահովվում են ուսուցման այնպիսի պայմաններ որոնց առկայությամբ յուրաքանչյուր սովորող յուրացնում է ոչ միայն ուսումնական նյութը այլ ակտիվորեն համագործակցում է իր համադասարանցիների հետ:

Չեռագրողության նպատակը:

Ուսումնասիրել և բացահայտել համագործակցային մեթոդների կիրառելիության արդյունավետությունը կենսաբանության առարկայի ուսուցման գործընթացում:

Չեռագրողական հարցը: Համագործակցային ուսուցման միջոցով բացահայտել աշակերտների մոտ սոցիալական հմտությունների ձևավորումն ու կիրառելիությունը:

<p>Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը</p>	<ul style="list-style-type: none"> • սովորել սովորելու կարողունակություն • ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն • թվային և մեդիա կարողունակություն • մշակութային կարողունակություն • ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
<p>Ջետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/</p>	<p>Ավագ դպրոցի սովորողներ</p>
<p>Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)</p>	<ol style="list-style-type: none"> 1. Գիտամեթոդական գրականության՝ կիրություն բնագավառում ուսումնասիրությունների և վերլուծությունների դիտարկում 2. Գիտական ճանաչողության տեսական մեթոդներ: Ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդների կիրառելիություն:

Գրականության ակնարկ

- Մեջբերումներ արդեն արված հետազոտություններին,
- Մեջբերումներ գրականությանը, տեղեկության վստահելի աղբյուրներին:

Պարտադիր է կատարել հղում աղբյուրին

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՎՆԱՐԿ

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք կիրառվում են դասի տարբեր փուլերում: Այդ ընթացքում աշակերտները ներքաշվում են մի գործընթացի մեջ, որտեղ նրանք կիսվում են գաղափարներով, փոխանակում են տեղեկատվություն, կատարում են ընտրություն և կայացնում են որոշումներ: Դրանք են "Աշակերտների թիմային առաջադիմություն", "Խճանկար", "Շրջվիր դեպի զույգ", "Պրիզմա", "Խմբային հետազոտություն", "Շրջագայություն պատկերասրահում" և այլն¹:

Համագործակցային ուսուցման տարբերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին՝ հասկանալու համագործակցային ուսուցման էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման պահանջներից է: Նշենք նաև, որ ժամանակակից կրթական գործընթացում կարևորվում է ոչ թե պատրաստի գիտելիքի մատուցումն ուսուցչի կողմից, այլ աշակերտին մասնակից դարձնելը այդ գիտելիքի ձեռքբերմանը: Համագործակցային մեթոդները թույլ են տալիս առավել արդյունավետ յուրացնել նոր նյութը, զարգացնել ինքնուրույնության, համագործակցային, հետազոտական աշխատանք կատարելու բազում հմտություններ, օրինակ՝ տեղեկույթի որոնման, հավաքման, մշակման և այլն²:

¹ Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս., Խաչատրյան Ս., Բայրթյան Ն., Ալեխանյան Լ., Պուրուկուրու Վ. Համագործակցային ուսուցում. Ձեռնարկ. Երևան: «Անտարես»: 2006:

² Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2005:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ

1.1.Ուսուցման գործընթացում համագործակցության անհրաժեշտությունը և համագործակցային ուսուցման մեթոդներ:

Ժամանակակից մանկավարժության գերխնդիրը ոչ թե երեխային սովորել սովորեցնելն է, այլ երեխայի մեջ սովորելու ցանկություն և նոր գիտելիքներ ձեռք բերելու անընդհատ ձգտման ձևավորումը՝ դրանով պայմանավորելով ուսումնական գործընթացի հաջողությունը, ուսուցչի և աշակերտների փոխհարաբերությունները: Ուսուցման մեթոդ ասելով՝ մենք հասկանում ենք անընդհատ կիրառվող աշխատանքի ձև, որը կիրառում է ուսուցիչը՝ ուսումնական գործընթացում, որը հնարավորություն է տալիս զարգացնել աշակերտների իմացական կարողությունները, հետաքրքրությունները, ձեռք բերել նոր կարողություններ և հմտություններ, ինչպես նաև այդ ամենը կիրառել գործնականում:

Ուսուցման մեթոդները մանկավարժի և սովորողի համատեղ աշխատանքն են ուսումնական գործունեություն կազմակերպելու նպատակով: Եթե խոսքը վերաբերում է միայն ուսուցչի գործունեությանը, ապա տեղին է խոսել դասավանդման մեթոդների մասին, իսկ եթե միայն սովորողի գործունեությանն է վերաբերում, ապա՝ ուսանելու մեթոդներին: Մեթոդն այն մեխանիզմն է, որն ապահովում է դասավանդողի և սովորողի մանկավարժորեն որոշակի նպատակադրում ունեցող փոխկապակցված գործունեությունը:

Համագործակցային ուսուցման կիրառումը սկսվում է դեռևս անտիկ դարաշրջանից: «Թալմուդը հասկանալու համար պետք է ընկեր ունենալ», - գրված է Թալմուդում: Հռոմեացի փիլիսոփա Սենեկան ասում էր, որ սովորեցնողը կրկնակի է սովորում: Իսկ 17-րդ դարում Կոմենսկին հավաստում էր, որ սովորողները շահում են երբ սովորում

են ուրիշից, նաև երբ սովորեցնում են ուրիշի: 18-րդ դարում Լանքաստերը և Բեյլը Անգլիայում կիրառում են սովորողների փոխուսուցումը³:

Համագործակցային ուսուցման կարևորագույն ձեռքբերումներն են

- անձի զարգացումը և անհատականության ձևավորումը.
- հոգեբանական և ֆիզիկական առաջուղության ապահովումը.
- սթրեսի հաղթահարումը.
- շրջապատողների հետ առողջ փոխհարաբերությունների կառուցումը:

Համագործակցային ուսուցման ապահովման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական՝ աջակցող փոխկախվածության ապահովումը: Փոխկախվածություն կարող է առաջանալ երեք տարբեր ձևերով՝

1. Մրցակցային. երբ խմբի անդամները ուսուցման նպատակներին հասնելու համար մրցում են միմյանց հետ:

2. Անհատական. երբ խմբի անդամները առկախվում են խմբակիցներից և յուրաքանչյուր աջակերտ կատարում է իր անհատական առաջադրանքը:

3. Համագործակցային. երբ խմբի անդամները համագործակցում են միմյանց հետ ընդհանուր նպատակին հասնելու համար:

Համագործակցային մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ. դրանք պետք է ուղղված լինեն սովորողների ինչպես մտավոր ու զգայական կարողությունների, այնպես էլ ինքնուրույնության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը: Ուսուցիչը միանգամից, մի դասի ժամանակ չի կարող օգտագործել մեթոդների հարուստ զինանոցը: Նա պետք

³ Խաչատրյան Ա.Գ., Աեակերաների ինֆուրույն և ստեղծագործական աեխա- տաեֆի ձևերը մայրենիի ժամերին /համագործակցային ուսուցում/,

«Նախա- ավիլ», 1. 2003, Երևան, «Տիգրան Մեծ», 64 էջ:

Է որոշակի դասի համար կատարի ուսուցման մեթոդի, հնարի ընտրություն: Ուսուցման մեթոդի հիմքում ընկած են այն խնդիրները, որոնք լուծվում են դասի ժամանակ կամ դասի որոշակի փուլում. բացի դասի նպատակից ու խնդիրներից, մեթոդների ընտրությունը կախված է նաև՝

- Նյութի բովանդակությունից,
- ուսումնական նյութի ծավալից և բարդությունից,
- Նոր գիտելիք ձեռք բերելու նկատմամբ աշակերտների շահագրգռվածությունից և համագործակցային հմտությունների մակարդակից,
- աշակերտների տարիքային առանձնահատկություններից,
- ուսումնական ժամաքանակից,
- ուսուցման նյութատեխնիկական պայմաններից, ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններից

- դասարանում աշակերտների թվաքանակից,
 - ուսուցչի պատրաստվածության մակարդակից և այլն⁴:
- Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին՝ հասկանալու համագործակցային ուսուցման էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման պահանջներից է: Նշենք նաև, որ ժամանակակից կրթական գործընթացում կարևորվում է ոչ թե պատրաստի գիտելիքի մատուցումն ուսուցչի կողմից, այլ աշակերտին մասնակից դարձնելը այդ գիտելիքի ձեռքբերմանը: Համագործակցային մեթոդները թույլ են տալիս առավել արդյունավետ յուրացնել նոր նյութը, զարգացնել ինքնուրույնության, համագործակցային,

⁴ Արնաուդյան Ա., Գյուլբուդադյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ. Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար: Երևան: Կրթության ազգային ինստիտուտի հարատարակչություն: 2004, 178 էջ:

հետազոտական աշխատանք կատարելու բազում հմտություններ, օրինակ՝ տեղեկույթի որոնման, հավաքման, մշակման և այլն⁵:

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ: Ստորև ներկայացնում ենք համագործակցային ուսուցման մի շարք մեթոդներ: Դրանք են՝ աշակերտների թիմային առաջադիմություն, խճանկար, շրջագայություն պատկերասրահում, երեք բանալի և մեկ կողպեք, հինգրոպեանոց ազատ շարադրանք⁶:

1. Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ: Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին:

2. Խճանկար (Ձիգսո, Jigsaw): Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի

⁵ Վարդումյան Ա., Ջադինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանա- կակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2005:

⁶ Ա. Է. Ափոյան, Համագործակցային ուսուցումը տարրական դասարաններում, Գիտական տեղեկագիր, Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ, 2014, էջ 336:

համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և Նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից: Խճանկարը դասարանում կարող է կիրառվել տարբեր ձևերով: Ներկայացնենք դրանցից մեկը: Աշակերտներին կարելի է բաժանել չորս կամ հինգ անդամ ունեցող տարասեռ խմբերի: Յուրաքանչյուր խմբին տալ դասի մեկ հատված և աշխատելու համար որոշակի ժամանակ: Այն լրանալուց հետո խմբերը ներկայացնում են իրենց հատվածը՝ կարդում են, բառերը բացատրում, դուրս գրում ուղղագրական արժեք ներկայացնող բառեր, դրանցով կազմում նախադասություններ, կատարում լեզվական աշխատանքներ և այլն: Յուրաքանչյուր խումբ սովորում է դասի մեկ հատվածը, բայց արդյունքում սովորում են ամբողջ դասը՝ դադարեցնելով աշխատանքը և ուշադիր լսելով բոլոր խմբերի պատասխանները: Կարող է ունենալ նաև փորձագետների խումբ՝ «Ջիգսո 2», որի փուլերն են .

- նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
- աշխատանք փորձագիտական խմբում,
- աշխատանք ուսումնական խմբում,
- ավարտական աշխատանք,
- ամփոփում:

3.Ծրջագայություն պատկերասրահում: Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ: Կրտսեր տարիքի աշակերտների հետ աշխատելիս խմբերին կարելի է տալ նույն առաջադրանքը կամ

խնդիրը: Աշխատանքը վերջացնելուց հետո, համեմատելով մյուս խմբերի աշխատանքների հետ, աշակերտները հետադարձ կապ են ապահովում:

4. Երեք բանալի և մեկ կողպեք: Աշխատանքը կարելի է կատարել գույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Աշակերտներին առաջարկում ենք դասից դուրս գրել երեք նախադասություն (երեք բանալի), որը կարևոր է այդ նյութը յուրացնելու համար, բնագրից ընտրել մեկ նախադասություն (կողպեք), որը կամփոփի, կընդհանրացնի ասելիքը, միտքը, գաղափարը:

5. Հինգրոպեանոց ազատ շարադրանք: Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանքը:

Համագործակցային ուսուցման ընթացքում ուսուցիչը ստանձնում է մեծ թվով պարտականություններ՝

- դասերի, վարժությունների, առաջադրանքների պլանավորում.
- սովորողների խմբերի ձևավորում.
- սովորողների տեղաբաշխում.
- առաջադրանքի ներկայացում, և բացատրում.
- խմբային աշխատանքի հսկողություն և անհրաժեշտության դեպքում միջամտություն.

- օգնություն սոցիալական հմտությունների զարգացման հարցում.
գնահատում:

1.2. Ուսուցման գործընթացում համագործակցային մեթոդների կիրառությունը և ազդեցությունը սոցիալական հմտությունների ձևավորման գործընթացում

Հանրակրթական դպրոցում կենսաբանություն առարկայի ուսուցումը որպես միջնակարգ կրթության պարտադիր բաղադրիչներից մեկը՝ նպատակ է հետապնդում ապահովել բնության և կենդանի օրգանիզմների մասին սովորողների գիտելիքների ձեռքբերումը, դրանց ճանաչողության մեթոդների տիրապետումը, հմտությունների և կարողությունների, ինչպես նաև արժեքային համակարգի ձևավորումը:

Հետաքրքրության խթանումը ուսումնական գործընթացում առանցքային նախապայման է աշակերտների հաջող ուսումնառության համար: Ներկայումս գոյություն ունեն բազմաթիվ համագործակցային մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս ուսուցիչներին արդյունավետ կերպով ազդեցություն թողնել աշակերտների այս կամ այն ուսումնական որակների և հատկանիշների վրա:

Հետազոտության ընթացքում առաջադրվել է հետևյալ վարկածը՝ գենետիկորեն ձևափոխված սնունդը ավելի վտանգավոր չէ քան , սովորական սնունդը և այդ սննդից ստացած հիվանդությունների մասին հստակ կարծիքներ չկան:

Հետազոտությունը ներառում է առաջնային տվյալների հավաքագրման հետևյալ մեթոդները՝ խմբային քննարկումներ աշակերտների հետ և փաստաթղթերի(վիճակագրական տվյալներ,

նախկինում կատարած հարցումներ, օրենսդրական փաստաթղթեր , միջազգային կազմակերպությունների հաշվետվություններ) վերլուծություններ:

Ֆոկուս խմբի անցկացման հիմնական նպատակը պարզել , թե ինչ են մտածում տվյալ աշակերտների խումբը 'հետազոտողին հետաքրքրող խնդիրների վերաբերյալ:

Այս մեթոդի արժեքավորությունը ըստ մասնագետների այն է, որ հարցազրույցի ազատ բնույթը հաճախ թույլ է տալիս անսպասելի տեղեկատվություն:

Համագործակցային մեթոդների առավելություններն են՝Սիներգիկ մեթոդ -միավորելով աշակերտներին մեկ խմբի մեջ արդյունքում ավելի շատ տեղեկատվություն է ստացվում, քան նրանցից յուրաքանչյուրի հետ զրուցելով:

Ձևագնդի էֆեկտ - ֆոկուս խմբում հատուկ է ձևագնդի էֆեկտը , երբ մասնակիցներից մեկը արտահայտում է որոշակի կարծիք , ապա այն շղթայական ռեակցիա է առաջացնում մնացած մասնակիցների մոտ և բոլորը սկսում են կարծիքներ արտահատել:

Խթանում-սովորաբար մասնակիցները իրենց մասին պատմելուց հետո, երբ հետաքրքրությունը մեծանում է ցանկանում են իրենց կարծիքը արտահայտել թեմայի շուրջ:

Անվտանգություն- քանի որ մասնակիցների պատկերացումները և զգացմունքները որոշակի հարցի շուրջ իրար մոտիկ են, ապա նրանք իրենց ավելի հարմարավետ են զգում և այդ պատճառով պատրաստ են կիսվել իրենց մտքերով :

Ինքնաբերություն - քանի որ մասնակիցներից չի պահանջվում պատասխանել կոնկրետ հարցի,ապա ավելի ճշգրիտ կարտահայտեն իրենց պատկերացումները:

Ինտուիտիվ խորաթափանցություն- սովորաբար լավ գաղափարներ ծնվում են անսպասելի՝ խմբում,այլ ոչ թե մեկ մարդու հետ հարցազրույցում:

Ուսուցչի կատարած հետազոտության ընթացքը

Հետազոտությունը իրականացվել է Արամուսի միջնակարգ դպրոցի 11-րդ և 12-րդ դասարանի աշակերտների հետ:


12-րդ դասարանում հետազոտությունը կատարել են ավանդական դասախոսության միջոցով, իսկ 11-րդ դասարանում կատարվեց հետազոտական աշխատանք: 12-րդ դասարանում որտեղ պարզապես դասախոսություն կատարվեց չարձանագրվեց հետաքրքրություն թեմայի նկատմամբ և ձախողվեց: Իսկ 11-րդ դասարանում կատարվեց աշակերտների մեծ ներգրավածություն: Մեծացավ աշակերտների հետաքրքրվածության աստիճանը ԳՄՕ-ների վերաբերյալ, որովհետև:

1. Առաջին դասաժամին մտազրոհի միջոցով աշակերտները ակտիվ մասնակցություն ունեցան թեմայի քննարկմանը իրենց նախնական գիտելիքների հիման վրա: Մասնակցում էին բոլորը, սակայն աշակերտները հասկացան, որ բավականաչափ քիչ տեղեկություն ունեն ԳՄՕ-ների վերաբերյալ և նրանք առաջարկեցին, որ անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկություններ հավաքել թեմայի վերաբերյալ մյուս դասաժամին քննարկելու նպատակով:


Աշակերտներից մեկը առաջարկեց, որ կարելի է դասարան բերել տարբեր մթերքներ և տեղում ուսումնասիրել և պարզել, որ մթերքների վրա է մակնշված ԳՄՕ:


2 Երկրորդ դասաժամին հետազոտական աշխատանքը եղավ հետևյալ կերպ: Աշակերտները առանձնացրեցին ԳՄՕ պարունակող և ԳՄՕ չպարունակող մթերքներ շատ լրացուցիչ տեղեկություններով զինված եկել էին: Դասարանում ստեղծվեց ընդհանուր համագործակցային մթնոլորտ: Խճանկար մեթոդի օգնությամբ աշակերտները յուրացրեցին ԳՄՕ-ների մասին նյութը և ձևավորեցին տարբեր կարծիքներ դրանց վերաբերյալ և ունեցանք տարակարծություն: Նրանք բաժանվեցին երկու խմբի 1 կողմ 2 դեմ և նրանց մեջ ծավալվեց բուռն բանավեճ: Յուրաքանչյուր

խումբ քարտեզագրման միջոցով ներկայացրեցին իրենց պատկերացումները ԳՄՕ-երի մասին:ԳՄՕ-ին կողմ խմբի ներկայացրած քարտեզագրումը ներկայացնում են ստորև .



ԳՄՕ-ին դեմ կողմնակիցներն են էլ այլ քարտեզագրումները. Եստորև.





Եզրակացություններ, առաջարկություններ

**Վերհանված
արդյունքներ,
եզրակացություններ,
պատասխան
հետազոտական հարցին**

Հետազոտության ընթացքում պարզվեց ,որ համագործակցային ուսուցումը իր մեթոդներով ավելի արդյունավետ է ավանդական ուսուցման հետ համադրելիս : Քանի որ,համագործակցային ուսուցման դեպքում ձևավորվեց սովորել սովորելու, մեղիա և թվային գրագիտություն կարողունակություններ:

Համագործակցային մեթոդները սովորողների ինքնուրույնության,շարժառիթների լավագույն ձևն են :Աշակերտները միասին աշխատելով կարող են համատեղ հասնել նպատակի:Այն ապահովում է սովորողների ճանաչողական գործընթացների և սովորողների անհատական հաղորդակցական,զգայական ոլորտի զարգացմանը:

Համագործակցային մեթոդները իրենց կարևոր տեղն ունեն կենսաբանություն դասավանդելիս,որոնց կիրառումը նպաստում է աշակերտի անձի սոցիալականացմանը և ինտեգրմանը դասապրոցեսին:

Համագործակցային ուսուցման հիմնական տարրերի բացահայտումը և կիրառումը հիմնավորեց համագործակցային միջավայրի ձևավորման անհրաժեշտությունը,որն օգնում է ուսուցչին

բարձրացնել ուսուցման գործընթացի արդյունավետությունը:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համալիր կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքների հաղորդում, այլև խթանում սովորողների ինքնուրույնությունը ակտիվ ճանաչողական և տրամաբանական գործընթացները: Կարող ենք ասել, որ ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման նորագույն փոխներգործուն մեթոդներին տիրապետելն է:

Հետազոտության արդյունքում ստացած տեղեկատվությունը կարևոր է նաև անվտանգ և առողջ սննդի օգտագործման համար:

Այսպիսով օգտագործելով համագործակցային ուսուցման մեթոդները հետազոտական աշխատանք կատարելիս աշակերտների մոտ ձևավորվեց բավականաչափ հետաքրքրություն, իրազեկվածություն, գիտելիքներ ԳՄՕ-ի վերաբերյալ: Ըստ աշակերտների կատարած հետազոտությունների համընդհանուր էկոլոգիական ճգնաժամը որում հայտնվել է մարդկությունը խաթարում է նաև մարդու հոգեֆիզիոլոգիական վիճակը :

Անկախ նրանից թե ինչպես ենք վերաբերվում ԳՄՕ-երին, նրա ստեղծումն

ու մշակումը մարդկության զարգացման չափանիշներից մեկն է, և ինչպես ամեն մի այլ արդյունք, այն կարող է լինել կամ օգտակար կամ լուրջ վտանգ ներկայացնել: Եվ քանի դեռ չկա Էկոհամակարգերի, մարդկանց, բույսերի, և կենդանիների վրա ԳՍՕ-ների ազդեցության մասին տեղեկատվություն, սննդամթերքի մեջ դրանց օգտագործումը ցանկալի է սառեցվի:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ. Համագործակցային ուսուցում. Ձեռնարկ. Երևան: «Անտարես»: 2006:
2. Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2005:
3. Խաչատրյան Ս.Գ., Աշակերտների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքի ձևերը մայրենիի ժամերին /համագործակցային ուսուցում/, «Նախաշավիղ», 1. 2003, Երևան, «Տիգրան Մեծ»:
4. Արնաուդյան Ա., Գյուլբուրադյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ.Մանագիտական գաղափարների ձեռնարկ ուսուցիչների համար: Երևան: Կրթության ազգային ինստիտուտի հարատարակչություն: 2004, 178 էջ:
5. Ա. Է. Ափոյան , Համագործակցային ուսուցումը տարրական դասարաններում, Գիտական տեղեկագիր, Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ, 2014: